

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱԿԱՏՈՒՄ

ՍՍՌ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՈԼՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

ՍԻՐԻԱ

ԴԱՄԱՍԿՈՍԻՑ

Խաղաղության պաշտպանության կրոնական կոնգրեսի նախագահ՝ Նորին Երանելություն Պատրիարք Ալեքսիին.

Խաղաղության հաստատումը ողջ աշխարհում հանդիսանում է բոլոր ժողովուրդների ցանկությունը, և ես շատ ուրախացա Մոսկվայում 1952 թվականի մայիսի 9—12-ին գումարվող կոնֆերենցիային մասնակցելու Ձեր հրավերի համար։ Ես որոշեցի մասնակցել կոնֆերենցիային, բայց արգելումն ինձ թույլ չտվեց մեկնելու Ձեր սիրելի երկիրը, խաղաղության համար Ձեր ժողովրդի կողմից մղվող բուռն պայքարում Ձեզ հետ մասնակցելու համար։

Ուստի ես հղում եմ Ձեզ իմ այս նամակը, շնորհակալությունս հայտնելով Ձեր հրավերի համար և արտահայտելով իմ համամտությունը Ձեր մարդասիրական ձգտումներին, հուսալով, որ կկարողանամ ապագայում իրականացնել ինձ համար այնքա՜ն ցանկալի այդ ուղևորությունը։

Ալլահն ասել է, որ երկիրը նորոգվելուց հետո նրա վրա չեն կարող արատներ լինել, և թո՛ղ լինի մեր մեջ բարի հաշտություն։ Ես կոչ եմ անում ամբողջ աշխարհում հավատացյալներին՝ կանգնել Ձեր երկրի քրիստոնյաների ու մուսուլմանների կողքին և համախմբվել նրանց հետ միասին մեկ ամբողջության մեջ, որպեսզի միացյալ ուժերով, խաղաղասեր բոլոր ժողովուրդների հետ միասին ի վիճակի լինենք պաշտպանելու խաղաղությունը, որը ձգտում են խախտել չար ուժերը։

Որպես արաբ և մուսուլման, ես հավատացած եմ, որ մեր ժողովուրդը ցանկանում է հանգիստ ապրել։ Մենք ուզում ենք խաղաղ ու հանգիստ ապրել, որպեսզի մեզ չսպառնա պատերազմի ու չարի աղբյուր դրամատիրությունը։

Իսլամը պատվիրում է մեզ ապրել խաղաղությամբ, սիրով, բարօրությամբ, բարի հարևանությամբ, մեզ արգելում է սպանել ու ատել միմյանց ու մեզ բոլորիս փոխըմբռնման կոչ է անում։

Մենք պարտավոր ենք թույլ չտալ, որ բռնկվի համաշխարհային պատերազմ, և պետք է ձգտենք ու հասնենք այն բանին, որպեսզի պատերազմից խորշեն բոլոր ժողովուրդները, որովհետև մեզ արգելվել է պատերազմ մղել։ Անհրաժեշտ է եղեռնագործ ձեռքին հնարավորություն չտալ կատարելու մի ոճիր, որը կխլի միլիոնավոր մարդկային կյանքեր։

Եվ եթե մեր ցանկությունը դառնա մեր երկրում ու ամբողջ աշխարհում խաղաղության ամրապնդման ուղիով ընթացող մի միասնական ուժ, ապա մենք կարող ենք հանգիստ կյանք վայելել, ինչպես այդ մասին Ամենաբարձրյալ Ալլահն է մեզ պատվիրել՝ լինել գթասիրտ ու վեհանձն, չարը խափանող։ Բայց եթե թշնամին դա մեզ մոտ, մենք նրան հակահարված կտանք մեր ամբողջ ուժով։

Մահմեդը սուրբ հադիսներում ասում է, որ դրախտը նրա՛նց համար է, ովքեր բարիք են գործում, իսկ դժոխքը՝ նրա՛նց համար, ովքեր իրենց ձեռքերով չարիք են գործում։

Ի վերջո, շնորհակալություն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր աշխատում են աշխարհի բարօրության համար։

Խնդրում եմ ընդունել խորունկ հարգանքներս ու լավագույն ցանկություններս՝ Ձեզ և Ձեր ժողովրդին։

Ալլահի օգնությունը հայցող՝ **ՄՈՀԱՄՄԵԴ ԷԼ—ԱՇՄԱՎ**

ԱՆԳԼԻԱ

ԼՈՆԴՈՆԻՑ

(Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի հասցեով 1952 թվականի ապրիլի 4-ին Քենտերբերիի տաճարի վանահայր Հյուլետտ Ջոնսոնի ուղարկած նամակից).

«... Ես հասկանում եմ Ձեր կոնֆերենցիայի ամբողջ կարևորությունը և շատ եմ ցավում, որ չեմ կարողանա կոնֆերենցիային մասնակցել։

Ես մտադիր եմ մայիս ամսին մեկնել Չինաստան, և հույս ունեի մայիսի 13-ին կամ 14-ին լինել Մոսկվայում։ Ես անչափ ցավում եմ, որ հնարավորություն չեմ ունենա մեկնել ավելի շուտ. այն ժամանակ կոնֆերենցիայում կկարողանայի ներկա լինել։

Ձեզ համար Աստուծո օրհնությունը հայցող, Ձեզ անկեղծորեն նվիրված՝

ՀՅՈՒԼԵՏՏ ՋՈՆՍՈՆ»

«Անգլիայում զանազան դավանանքների մի խումբ սպասավորներս ու ծխականներս, միավորված «Քրիստոնյաներն ու ճգնաժամը» անվան տակ, հղում ենք մեր ողջույնը և ամենաանկեղծ ցանկությունները՝ Եկեղեցու և ժողովրդի աջակցությունը ամբողջ աշխարհում խաղաղության պաշտպանության գործում ուժեղացնելու հարցին նվիրված՝ ՍՍՌ Միությունում գտնվող եկեղեցիների ու կրոնական կազմակերպությունների կոնֆերենցիայի հաջողության համար»։

ՄԵՐՍԵՐ ՎԻԼՍՈՆ

ԼՈՆԴՈՆԻՑ

Հաշտեցման բարեկամների ընկերությունը՝ Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք Նորին Վեհափառություն Ալեքսիին.

... Մենք հետաքրքրությամբ իմացանք, որ Դուք Սովետական Միության մեջ գտնվող բոլոր եկեղեցիների ներկայացուցիչներին դիմարել եք խաղաղության պաշտպանության հարցը քննարկելու։ Այդ առթիվ մենք հղում ենք Ձեզ մեր քրիստոնեական բարեկամական ողջույնը։

Հաշտեցման բարեկամների ընկերությունը քրիստոնեական միջազգային մի կազմակերպություն է, որի անդամները հրաժարվել են պատերազմից, որովհետև նրանք գտնում են, որ պատերազմը անհամատեղելի է թե՛ մարդկային կյանքին և թե՛ Հիսուս Քրիստոսի վարդապետության։ Մենք չենք կարող նախապատրաստել ավերածություններ, մասնակցել քրիստոնեական բարեկամության քայքայմանը, մի բարեկամություն, որն ամենուրեք միացնում է Հիսուս Քրիստոսի վարդապետության հավատարիմ տղամարդկանց ու կանանց։

Մենք աղոթում ենք, որպեսզի Ձեր հրավիրած կոնֆերենցիան քրիստոնեական հաստատուն պաշտամունքի ուղիով ընթանալով որոշում ընդունի, հրաժարվելով պատերազմից ու նրա ամեն տեսակ նախապատրաստությունից և գնալու քրիստոնեական սիրո ուղիով, ինչ գնով էլ լինի։

Աշխարհում ավելի քան 600.000.000 քրիստոնյաներ են ապրում, և մենք հավատացած ենք, որ երբ Եկեղեցին ընթանա քավության, ստեղծագործության, թողության, ինքնազոհաբերման ուղիով, այսինքն՝ քրիստոնեական կյանքի ուղիով, այն ժամանակ Աստուծո ուժը, որ միայնակ հաղթում է չարին, կդա իր ամբողջ զորությամբ։

Իմ անկեղծ ողջույնն եմ հղում Ձեզ ու միտրոպոլիտ Նիկոլային, որին տեսնելու հաճույքն եմ ունեցել անցյալ տարվա նոյեմբեր ամսին։

Ձեզ անկեղծորեն նվիրված՝

Գլխավոր քարտուղար, դասախոս՝
ԿԼԻՖՖՈՐԴ Գ. ՄԵԿԵՅՐ

ԱՎՍՏՐԱԼԻԱ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՆՅՈՒ-ՈՒԵԼՍԻՑ

Կրուաիցկու և Կոլոմենայի միտրոպոլիտ գերաշնորհ Նիկոլայ սրբազանին.

Թանկագի՛ն Տեր, շնորհավորում ենք Ձեզ, Ձեր եկեղեցիներին ու բոլոր քրիստոնյա եղբայրներին։ Ողջունում ենք Ձեզ ի սեր մեր Տիրոջ ու Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի։

Մենք՝ Ավստրալիայի Հարավային Նյու-Ուելսի զանազան բողոքական եկեղեցիների հոգևորականներս ու ծխականներս, որոշեցինք նամակ գրել Ձեզ։

Աշխարհի վրա անհաշտության ու պատերազմի ամպ է կախվել, և մենք Ձեզ հետ միասին զգում ենք, որ Քրիստոնեական Եկեղեցին, հանուն հարությունն առած Տիրոջ, պետք է պայքարի խաղաղության և հաշտության համար։

Մեր խմբի անդամներից մի քանիսը մասնակցում են խաղաղության պաշտպանության շարժմանը և մտնում են Ավստրալիայում խաղաղության պաշտպանության համապատասխան կազմակերպությունների մեջ։

Սակայն մեր եկեղեցիները բավականաչափ տեղյակ չեն Ձեր երկրում քրիստոնեական եկեղեցիների կյանքին... Բայց մենք կուզենայինք մեր բոլոր

եկեղեցիներին պատմել, թե վերջին տարիներում Տիրոջ վերաբերյալ ի՞նչպես եք գործել Դուք։ Մենք նաև կուզենայինք հավատել մեր եկեղեցիների հոգեկան մերձավորությունը Ձեր Եկեղեցու հետ, որովհետև մենք բոլորս զգում ենք հարություն առած Տիրոջ ներկայությունն այս օրերում։

Մենք Ձեզ հետ միասին ցավում ենք այն զարհուրելի ավերածությունների վրա, որոնք անցյալ պատերազմը պատճառեց, թեպետև մեր երկիրը չդարձավ ռազմադաշտ, և մենք այդ զրկանքները կրեցինք մասամբ միայն։ Ո՞չ ոք չի կարող ժխտել պատերազմի այն ծանրությունը, որ Դուք կրեցիք։ Մենք կուզենայինք, որպեսզի Ձեր քրիստոնյաներն իրենց տպավորությունները հաղորդեին մեր քրիստոնյաներին։

Մենք Ձեզ շափազանց շնորհապարտ կլինենք, եթե Դուք մեզ գրեք ողջույնի այնպիսի մի նամակ, որը մեզ աջակցեր խաղաղության համար մղվող մեր պայքարում և օգներ խորտակելու արևմտյան ու արևելյան դեմոկրատիայի ժողովուրդների միջև առաջացած անջրպետները։ Այդ անջրպետը հաճախ տրոհում է նաև քրիստոնեական եկեղեցիները։

Թող Աստված օգնե մեր քրիստոնեական աշխատանքին, թող նա օրհնե Ձեզ և մեզ, որ ձգտում ենք հավատարիմ լինել «այն անվանը, որ կրում ենք մենք»։

Հանուն խաղաղության պայքարի Ձեր բարեկամ՝

Դասախոս՝ ԱԼԱՆ Վ. ԲՐԱՆԴ

ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱ

ՊՐՅԱՇԵՎԻՑ

Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Վեհափառություն Ալեքսիին.

... Մոսկվայում տեղի ունեցող եկեղեցական կոնֆերենցիայի աշխատանքի այս օրերին մեր թեմը խնդրում է հաղորդել կոնֆերենցիային, որ մենք ո՞չ մի օր չենք թուլացնի մեր լարված պայքարը հանուն խաղաղության, եռանդագին հիշելով Փրկչի խոսքերը՝ սիրել միմյանց և ամեն կերպ օգնել միմյանց և աջակցել բարու գործերում։

Մեր թեմն այն համոզման է հանգել, որ խաղաղության վերաբերյալ ամեն մի զրույց, մամուլի ամեն մի հոդված ու ռադիոյով հաղորդվող ամեն մի խոսք պետք է հագեցված լինեն մարդս մարդուն ուժգնորեն սիրելու ու վստահություն տածելու քրիստոնեական կոչով։ Խաղաղության հարցին այդպես վերաբերվելու դեպքում միայն իսկապես կաջակցենք մենք պատերազմի դեմ խաղաղության հաղթանակին...

Սլովակիայի Պրյաշևի թեմի հոգևորականների ու ծխականների անունից՝ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԼԵՔՍԻ

ՀՈԼԱՆԴԻԱ

ՀԱԱԳԱՅԻՑ

Պատրիարք Ալեքսիին.

Ձերդ վեհափառությանը հղում եմ հաջողության անկեղծ ցանկություններս՝ ամբողջ աշխարհում խաղաղությունն ամրապնդելուն նվիրված կոնֆերենցիայի բացման առթիվ։

ԴԻՈՆԻՍԻՈՍ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՀԱԱԳԱՅԻՑ

Պատրիարք Ալեքսիին.

Հայագյի Ռուսաց Ուղղափառ Եկեղեցու ծխական խորհուրդն իր ողջույնն է հղում Ձերդ Վեհափառության նախաձեռնությամբ հանուն խաղաղության գումարված համամիութենական կոնֆերենցիային։

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՌՈՏՏԵՐԴԱՄԻՑ

Պատրիարք Ալեքսիին.

Ջերմագին ցանկություններս՝ հանուն խաղաղության կոնֆերենցիայի հաջողության։ Թող հաղթանակի խաղաղությունը։

ՌՈՏՏԵՐԴԱՄԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՄՍՏԵՐԴԱՄԻՑ

Պատրիարք Ալեքսիին.

Լի պատկառանքով ողջունում ենք Ձերդ Վեհափառությանը և հղում մեր ցանկությունները՝ հաջողությունների հասնելու համար հանուն ամբողջ աշխարհում խաղաղության ամրապնդման կոնֆերենցիայի աշխատանքում։

ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ՍՈՒՐԲ ՊԱՆՏԵԼԵՅՄՈՆԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԾՈՒԽԻ
ՄԻ ԽՈՒՄԲ ԾԽԱԿԱՆՆԵՐ

ՀԱԱԳԱՅԻՑ

Պատրիարք Ալեքսիին.

Լավագույն ցանկություններս Ձերդ Վեհափառության գումարած կոնֆերենցիայի հաջողությանը։

Թող Աստված խաղաղություն պարգևի ամբողջ աշխարհին։

ԻՍԱԿՈՎ ԱԲԵՂԱ

ԱԳՐԱՎԵՆՀԱԳԵՑԻՑ

Պատրիարք Ալեքսիին.

Լավագույն ցանկություններս կոնֆերենցիայի հաջողությանը։ Հոլանդիայի առաջադիմական քրիստոնյաները լի հուսով նայում են Ռուսաց Եկեղեցու հանուն խաղաղության պայքարին։

ԻՌՀԱՆՆԱ ՎԱՑԵՐԲԵՌԻ

ՈՒՏՐԵԽՏԻՑ

Բոլոր եկեղեցիների ու կրոնական միավորությունների Մոսկվայի խաղաղության կոնֆերենցիայի կազմակերպական կոմիտեին.

Ձեզնից շատ շնորհապարտ կլինեի ես, եթե Դուք կարողանայիք կոնֆերենցիայի ծրագիրն ու զեկուցումները ուղարկել ինձ, որպեսզի հասկացողություն ունենայի ես, թե ի՛նչ է խոսվել այդ կոնֆերենցիայում հավերժահիշատակ այս օրերին... Վաղօրոք շնորհակալություն եմ հայտնում Ձեզ և ցանկանում եմ կոնֆերենցիային լիակատար հաջողություն։

Ձեզ անկեղծորեն նվիրված՝

Ուտրեխտի համալսարանի նոգեբանության թեկնածու՝
Ա. Վ. ԲՈՒՐԳԵՐ

ՇՎԵՅՑԱՐԻԱ

ԺԸՆԵՎԻՑ

Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Վեհափառություն Ալեքսիին.

Բանվորական Առաքելությունը, «Երանի՜ խաղաղարարաց» (Մատթ., Ե 9) նշանաբանով ամբողջ աշխարհի հավատացյալների միավորումը անհրաժեշտ համարելով, ողջունում է Ձերդ Վեհափառության իմաստուն նախաձեռնությամբ գումարված պատմության մեջ հավատացյալների առաջին կոնֆերենցիային, որի նպատակն է խաղաղության գործը և մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի՝ կյանքի առաջնորդի փառաբանումը։ Մենք հավատացած ենք, որ Ձեր բարի ձեռնարկումը անպատասխան չի մնա արտասահմանում։ Թող մեր աղոթքն ուղղվի նենգ դիտավորությունների խափանմանը, թող Տերը աշխարհի գոռող և ամբարտավան կառավարողներին կայենյան պիղծ ուղիներից դարձնի դեպի աշխատավորների բարօրությունը։

Մենք ցավում ենք, որ մեզնից անկախ պատճառներով զրկվեցինք խաղաղության վեհ գործի ընդհանուր գանձարանը մեր լուման մուծելու հնարավորությունից. բայց բացակա լինելով մարմնապես, մենք Ձեզ հետ էինք հոգեպես և կիրակնօրյա մեր ժողովներում միացնում էինք մեր աղոթքները Զագորսկում հավաքվածներիդ աղոթքներին. և մենք գիտենք, որ մեր ընդհանուր աղոթքները չեն մնա ապարդյուն։ Ողջունելով եկեղեցիների ու կրոնական միավորությունների առաջին կոնֆերենցիային, մենք խնդրում ենք խաղաղության հավատարիմ կողմնակիցների թվում դասել նաև մեր Բանվորական Առաքելությունը։

Բանվորական Առաքելությունը շնորհակալություն է հայտնում ու փառաբանում Տիրոջը ՍՍՌՄ խաղաղասեր կառավարության համար, որը նպաստեց հավատացյալների կոնֆերենցիայի գումարմանը, մի կոնֆերենցիա, որը կանգնեց դեպի Աստուծո թագավորության ու նրա ճշմարտության դրունքը (Բ Հովհ., Ա 2) տանող ուղու վրա։

Բանվորական Առաքելության խորհրդի անունից եղբայրական ողջույնով՝
ՀՈՎԻՎ ՆԻԿՈԼԱՅ ԼԱՄԲԵՐ

ՄԵՔՍԻԿԱ

Ռուսաց Ուղղափառ Եկեղեցու Նորին Սրբություն Պատրիարք Ալեքսիին.

Ես, որպես Մեքսիկական Ուղղափառ Կաթոլիկ Սուրբ Եկեղեցու հոգևորականության և Եպիսկոպոսարանի ներկայացուցիչ, կանգնած եմ Ձերդ Վեհափառության առջև, որպեսզի վառ ձգտմամբ Ձեզ հետ միասին միանամ համընդհանուր խաղաղությանը...

... Մենք հեռավոր երկրներից կգանք ժողովի, որը բացվում է Մոսկվայում, կգանք խոնարհաբար, Սուրբ Հոգով լցված, և ամենօրյա մեր խնդիրներն ըմբռնելով, համաձայնության կգանք մեր եղբայրների հետ այն հարցում, թե ինչպես մենք պետք է ուսուցանենք մեր հոտին, որ նման լինի այն բանին, թե ինչպես էր Քրիստոսն այդ անում, որ սերը, հավատն ու հույսը դառնային չարը խափանող զլխավոր զենքը, և որպեսզի հաստատվի այսպիսով այն ուղին, որը մեզ տանելու է դեպի ավետյաց աշխարհը։

Մեքսիկական Ուղղափառ Կաթոլիկ Առաքելական Եկեղեցու
Պատրիարք և նախագահ՝ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԷԴՈՒԱՐԴՈ ԴԱՎԻԼԱ.

ՅԱՊՈՆԻԱ

Խնդրում եմ սովետական կոնֆերենցիային հաղորդեք իմ հիացմունքը և Ցապոնիայի խաղաղության գանդիստական լիգայի, քվաքերների, բուդդայական-խաղաղարարների, նիխոնզան-միոխոջի բուդդայականների համագործակցության անկեղծ ցանկությունը։

Մոսկվայի տնտեսական խորհրդակցության պատվիրակության՝
ԹՈՄԻ ԿՈՐՆ.

ՌՈՒՄԻՆԻԱ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Ռուսաց Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Ալեքսիին.

Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի Ավետարանական-Երիցական Եկեղեցու անունից հղում ենք մեր ողջույնն ու բաժանում ենք Սովետական Միության մեջ գտնվող բոլոր եկեղեցիների կոնֆերենցիային արտահայտած տեսակետները ի պաշտպանություն խաղաղության։ Ցանկանալով լիակատար հաջողություն կոնֆերենցիային, խնդրում ենք, որ ողորմածն Աստված հաղթություն պարգևի ամբողջ աշխարհում խաղաղության համար մարտնչողներին։

ԱՐՔԵՅ ԳԵՈՐԳԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Ռուսաց Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Ալեքսիին.

Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի Քրիստոնեական Հին-Միսական Եկեղեցին ի խորոց սրտի ողջունում է Սովետական մեծ Միության մեջ գտնվող բոլոր եկեղեցիների կոնֆերենցիային՝ ի պաշտպանություն խաղաղության և հաջողություն է ցանկանում ամբողջ աշխարհում խաղաղության պաշտպանների ճակատի ամրապնդմանն ու լիակատար հաղթանակին։

ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՏԻԽՈՆ (ԿԱԶԱԼԿԻՆ)

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Ռուսաց Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Ալեքսիին.

Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի Միավորչական Եկեղեցու անունից համերաշխության մեր ողջույնն ենք հղում Սովետական Միության մեջ գտնվող բոլոր եկեղեցիների կոնֆերենցիային՝ ի պաշտպանություն խաղաղության և մեր հաստատ վճռականությունն ենք արտահայտում ժողովուրդների միջև կայուն խաղաղություն հաստատելու համար Ձեզ հետ միասին պայքարելու՝ ընդդեմ նոր պատերազմի հրձիգների։

ԴՐ. ԿԻՇ ԵԼԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Ռուսաց Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Ալեքսիին.

Մենք ևս ուրախությամբ մասնակցում ենք Սովետական Միության մեջ գտնվող բոլոր եկեղեցիների կոնֆերենցիային՝ ի պաշտպանություն խաղաղության և մեր բողոքն ենք միացնում Ձեր բողոքին՝ Կորեայում մղվող զավթողական պատերազմի դեմ և նրա ամենանողկալի տեսակի՝ բակտերիոլոգիական պատերազմի դեմ։

Բոլոր ուժերով աշխատելով ի պաշտպանություն խաղաղության, հայցում ենք Աստուծո օրհնությունը՝ կոնֆերենցիայի հաջողության համար։

ՎԱՍՍԱՐԽԵԼԻ ՅԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու անունից մեր ողջույնն ենք հղում Սովետական Միության մեջ գտնվող բոլոր եկեղեցիների և կրոնական միավորությունների կոնֆերենցիային՝ ի պաշտպանություն ամբողջ աշխարհում խաղաղության, հայցելով ողորմածն Աստուծո օրհնությունն ամբողջ աշխարհում կայուն խաղաղություն հաստատելու համար գումարված կոնֆերենցիայի ջանքերի համար։ Միաժամանակ մեր բողոքի արտահայտումն ենք միացնում Ձեր բողոքին ագրեսորների դեմ, որոնք կիրառում են բակտերիոլոգիական զենքի բարբարոսական մեթոդ, որ հարվածում է Կորեայի խաղաղ բնակչությանը։

Բուխարեստի Հռոմեական Կաթոլիկ Արքեպիսկոպոսարանի
գլխավոր փոխանորդ՝ ԿԱՆՈՆԻԿՈՍ ԻՈՎԱՆԵԼԻ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի մկրտչականների, ադվենտիստների, ավետարանական քրիստոնյաների և Հոգեգալստյան ավետարանական պաշտամունքի ֆեդերացիան ուրախությամբ ողջունում է Սովետական Միության մեջ գտնվող պաշտամունքների ու կրոնական միավորությունների ներկայացուցիչների մայիսի 9—12-ին կայանալիք ժողովը, որ գումարվում է խաղաղության հարցի մասին խորհրդակցելու համար, և միանում է հանուն ամբողջ աշխարհում խաղաղության ամրապնդման պայքարին։

Խորհրդի անունից նախագահ՝ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԱԴՐԻԱՆ
Գլխավոր քարտուղար՝ ԻՈՀԱՆՆ ՌՈՒՍՈՒ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Ավետարանական-Լութերական Եկեղեցու անունից ներքո ստորագրյալ Ֆրիդրիխ Մյուլլեր եպիսկոպոսս ողջույնի ու միասնության ուղերձս եմ հղում ՍՍՌՄ-ում գտնված եկեղեցիների խաղաղության կոնֆերենցիային, ի խորոց սրտի ցանկանալով, որպեսզի չքանա պատերազմի հորդորը և որպեսզի երկրի վրա կենսագործվի խաղաղությունը բոլոր ժողովուրդների միջև՝ համաձայն Քրիստոսի ծննդյան օրը տրված խոստման։

Ավետարանական-Լութերական եպիսկոպոս՝
Դոկտոր ՖՐԻԴՐԻԽ ՄՅՈՒԼԼԵՐ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Մենք՝ որպես սպասավոր Հայոց Սուրբ Եկեղեցու,— որը ղեկավարվում է Էջմիածնից մեծ հայրենասեր, Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Վեհափառություն Գեորգ Զ-ի կողմից, և որն այժմ հանդիսանում է ժողովուրդների միջև խաղաղություն ու հաշտություն հաստատելու համար պայքարող եկեղեցիներից մեկը,— երջանիկ ենք, որ Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի Հայոց թեմի անունից պատիվ ունենք հաղորդելու մեր ջերմ ողջույնը, Ձերդ Վեհափառության ղեկավարությամբ, Ռուսական Մեծ Ուղղափառ Սուրբ Եկեղեցու գլխավորությամբ, ՍՍՌ Միությունում գտնված բոլոր եկեղեցիների ու կրոնական միավորությունների կոնֆերենցիային և լիակատար հաջողություն ու փայլուն հաղթանակ ենք ցանկանում ամբողջ աշխարհում խաղաղության պաշտպանության սուրբ գործին։

Հայոց Եկեղեցու առաջնորդ՝ ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԳԵՐՄԱՆԻԱ

Ուզում եմ ես հույս հայտնել, որ Ձերդ ղեկավարությամբ գումարվող առաջիկա կոնֆերենցիան իրոք կծառայի երկրում խաղաղություն հաստատելու գործին և կխորտակի թշնամանքի ու ատելության պատճառները կամ, առնվազն, այնքան կթուլացնի այդ պատճառները, որ Արևմուտքում և Արևելքում մարդիկ կկարողանան տեսնել այն մարդուն, որին Տերն անվանում է որդի և իր մերձավորին եղբայր՝ ի Հիսուս Քրիստոս։ Ի սեր նրա ես ողջունում եմ Ձեզ ու Ձեր ամբողջ հոտին։

Էսսենյան մարզի Ավետարանական-Լութերական եկեղեցու նախագահ՝
ՀՈՎԻՎ ՄԱՐՏԻՆ ՆԻՄԵԼԼԵՐ

ԲԵՌԼԻՆԻՑ

Գերամեծարելի Հա՛յր. Գերմանիայի Քրիստոնեական-դեմոկրատական միության, Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայում հանուն խաղաղության պայքարող Քրիստոնյաների քաղաքական միության անունից ու հանձնարարությամբ պատիվ ունեմ ու մեծ հաճույք հաղորդելու ողջույնս Սովետական Միության մեջ գտնված քրիստոնյա եկեղեցիների խաղաղության

կոնֆերենցիային և ի խորոց սրտի անկեղծ ու բարեկամական ցանկություններս՝ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության մայրաքաղաքում խաղաղության գործի և համայն քրիստոնեության համար այնքան նշանակալից կոնֆերենցիայի հաջող ավարտմանը։

Ձեր կոնֆերենցիան տեղի է ունենում այն պահին, երբ ամբողջ աշխարհում խաղաղությանը վտանգ է սպառնում իմպերիալիստների անպատասխանատու մեքենայությունների պատճառով։

ԱՄՆ-ում ու նրանից կախման մեջ ընկած երկրներում կառավարող շրջանները, կորցնելով մարդկային խիղճը և շահույթներ ստանալու ետևից, բոլոր ուժերով ջանում են սանձազերծել նոր համաշխարհային պատերազմ ու մարդկությանը վերստին պատճառել անսահման տառապանքներ, արցունքներ, թափել արյան հեղեղներ։ Մենք նույնիսկ չենք կարող պատկերացնել, թե մինչ ի՛նչ աստիճանի ահավոր է լինելու մարդկության այդպիսի ոչնչացումը։ Երկրագնդի շատ վայրերում արդեն վառված է պատերազմի ջահը։ Նորից հազարավոր ու հազարավոր մարդիկ զոհ են դառնում իմպերիալիստական պատերազմի և գաղութային ստրկացման։

Այս ծանր, վճռական ժամին ամբողջ մարդկությունը պետք է գործի վճռականորեն և պայքարի կայուն խաղաղության համար, իսկ բոլոր դավանությունների և բոլոր ազգությունների քրիստոնյաներն այս դեպքում կրում են առանձնապես մեծ պատասխանատվություն։

Գերմանիայի Քրիստոնեական-դեմոկրատական միության թեզիսներում խաղաղության համար մղվող պայքարին քրիստոնյաների մասնակցելու մասին ասված է հետևյալը. «Քրիստոնեության 2.000-ամյա գործունեության ընթացքում նրա հիմնական խնդիրը հանդիսանում է խաղաղության ավետիսը։ Հենց քրիստոնեության սկզբում քրիստոնեական ուսմունքի քարոզիչները պայքար էին մղում անարդարության ու կեղեքման դեմ, որովհետև միայն այդ ճանապարհով կարող է իրագործվել սիրո պատվիրանը մերձավորի նկատմամբ»։

Պատերազմը ոչ թե Աստուծո կամքով թելադրվող մի իրադարձություն է, այլ ոչ-կատարյալ և քրիստոնեությունից շեղված մարդկանց ձեռքի գործ։ Քրիստոսի ուսմունքի կենսագործման համար պահանջվում է ամրապնդել խաղաղությունը երկրի վրա՝ պատերազմից հրաժարվելով և ամեն կերպ նրա առաջն առնելով։ «Այդ պարտավորեցուցիչ կոչը՝ Գերմանիայի բոլոր քրիստոնյաներին, խաղաղության մեծ ասպարիզում նրանց առջև դրված խնդիրները, որ պետք է կատարվեն հաստատապես հավատով լի ու իբրև օրինակ ուրիշներին,— այդ բոլորն իրենց շարունակությունն են գտնում Գերմանիայի Քրիստոնեական-դեմոկրատական միության «Քրիստոնեական ռեալիզմի թեզիսներում», որտեղ ասված է. «Կամավն Աստուծո, խաղաղությունը երկրի վրա պետք է դառնա մարդկային հասարակության ուղեցույց սկզբունքը։ Այդ խաղաղությունը խաղաղություն է բոլոր ժողովուրդների համար, ուստի և մարդկության մեջ չպետք է գտնվի որևէ քրիստոնյա, որը չհանդիսանա այն բանում լիովին հավատացած խաղաղության մի մարտիկ, թե պետք է խաղաղությունը հաստատվի ու պահպանվի և քրիստոնյաները պետք է այդ խաղաղությունն իրենց ձեռքում պահեն հպարտորեն ու այնպիսի մի գիտակցությամբ, որ քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչները գտել են ճանապարհը դեպի խաղաղության մեծ բանակը։

Խաղաղությունը համոզված կերպով ճանաչելը՝ որպես մեր արդիականության հիմնական պահանջ, և ամբողջ աշխարհում կայուն խաղաղության

համար ցուցաբերվող հաջող գործունեությունը հանդեցրին այն բանին, որ մենք բոլորս քրիստոնյաների ընդհանուր միություն կազմեցինք ու մենք բոլորս էլ համոզված ենք, որ իսկական քրիստոնեությունը երևան է գալիս խաղաղության և այս աշխարհում մարդկային հարաբերությունների արդարացի կարգերի համար ցուցաբերվելիք պատասխանատվության մեջ։ Մենք գիտենք, որ Գերմանիայի քրիստոնյաները կրում են առավելագույն պատասխանատվություն այն բանի համար, որպեսզի Գերմանիան երրորդ համաշխարհային սարսափելի պատերազմի ռազմաբեմ չդառնա»։

Մենք կատարում ենք մեր պարտքը այն հաստատ համոզմունքով, որ ամբողջ աշխարհի խաղաղասեր քրիստոնյաները և ամենից առաջ Սովետական Միության մեջ գտնված քրիստոնեական եկեղեցիները, մեզ հետ կողք-կողքի պայքարում են հանուն խաղաղության։ Ուստի Սովետական Միության մեջ գտնված եկեղեցիների ու կրոնական միավորությունների կոնֆերենցիան մեծ նշանակություն կունենա և ուղեցույց կհանդիսանա Գերմանիայի քրիստոնյաների համար՝ կայուն ու արդարացի խաղաղություն հաստատելու նրանց համատեղ ջանքերում։

Այդ կոնֆերենցիան նշանակություն կունենա նաև մեր ժողովրդի համար, մեր Հայրենիքի համար, մեր ազգային հարցերը լուծելու, այսինքն՝ Գերմանիայի դեմոկրատական միավորման ու միասնական, ամբողջական Գերմանիայի հետ հաշտության պայմանագիր կնքելու համար։

Ուստի թույլ տվեք ինձ մի անգամ ևս ցանկանալ Ձեր այնքա՜ն կարևոր կոնֆերենցիային լիակատար հաջողություն։

ՕՏՏՈ ՆՈՒՇԿԵ

Ողջունում ենք Սովետական Միության մեջ գտնված բոլոր եկեղեցիների ու կրոնական միավորությունների Մոսկվայում Պատրիարքի գումարած կոնֆերենցիային. ցանկանում ենք օրհնված բեղմնավոր աշխատանք՝ ամբողջ աշխարհում խաղաղության համար քրիստոնյաներին միավորելու գործում։

Խաղաղության պաշտպանության քրիստոնեական բանվորական միություն՝
Քանանա՝ Դ. ԳԵՐՑ (Լայպցիգ)
Ուսումնական մասի վարիչ՝ դոկտ. ՎԵԴԵՄԱՆ (Էրֆուրտ)

ԲԵՌԼԻՆԻՑ

Հանուն խաղաղության՝ Գերմանական Ավետարանական ազատ եկեղեցիների Քրիստոնեական բանվորական միության աշխատակիցներն իրենց հավատակիցներին՝ Մոսկվայի եկեղեցական կոնֆերենցիայի մասնակիցներին ի խորոց սրտի ողջունում են և հաջողություն են ցանկանում ամբողջ մարդկության բարօրության համար խաղաղությունն ամրապնդելու գործում։

ՀՈՎԻՎ Ա. ՎՈԼՖ (Շտոլլենբերգ)

ԴՐԵԶԴԵՆԻՑ

Քրիստոնեական-դեմոկրատական միության Սաքսոնական երկրամասային վարչությունը հաղորդում է իր անկեղծ ցանկությունները՝ Մոսկվայի եկեղեցական կոնֆերենցիայի երջանիկ ու շնորհալի աշխատանքի համար։ Մենք համերաշխ ենք ընթանում եկեղեցական կազմակերպությունների ու Սովետական Միության մեջ գտնված ղեկավար օրգանների հետ այն գիտակցությամբ, որ մեր քրիստոնեական դավանանքի խնդիրն է մարդկությանը պահել խաղաղության մեջ և երջանիկ ապագայի համար՝ սոցիալական արդարության ու առաջադիմության հասնելու նպատակներով։

Նախագահ՝ ՄԱԳՆՈՒՍ ԴԵԴԵԿ

ՇՎԱՐՑԵՆԲԵՐԳԻՑ, ՀԱՆՔԱՍԱՐԵՐ

Համաշխարհային պատմության համար այնքան նշանակալից այս պատասխանատու ժամին ողջունում ենք մենք Ձեր կոնֆերենցիային և լիակատար հաջողություն ցանկանում նրան։

Խաղաղության պաշտպանության կոմիտեից՝
ՀՈՎԻՎ ՑԻՊՖԵԼ, ՀՈՎԻՎ ՄԵՎԵՍ, ԴՈԿՏՈՐ ՇՄԱԼՖՈՒՍ, ՕՍՏՐՈՎՍԿԻ

ՇՎԵՐԻՄԵԿԼԻՑ

Եղե՛ք քրիստոնեական խոսքի և գործի գործիչներ։ Ամբողջ աշխարհի քրիստոնյաներն անում են ամեն հնարավոր բան խաղաղությունը պաշտպանելու համար։ Ես ուրախությամբ օգնում եմ խաղաղության գործին և ողջունում եմ Մոսկվայում հավաքված, հավատով և քրիստոնեական արարքներով միավորված քրիստոնյաներին, որոնք խաղաղությանը ծառայելու գործում կատարում են մեր արդիականության ամենաանհրաժեշտ ու ամենաազնիվ խնդիրը։

ՀՈՎԻՎ ԹԵԵԿ, ԼՅՈՒԴՎԻԿՍԼՈՒՍՏ

ԲԵՌԼԻՆԻՑ

Մենք, Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի Քրիստոնեական բանվորական միավորման մեջ հանուն խաղաղության աշխատող քրիստոնյա կաթոլիկներս ի սրտե ողջունում ենք Մոսկվայում հրավիրվող եկեղեցիների կոնֆերենցիային։ Ձեզ անձամբ հղում ենք մենք լավագույն ցանկություններ՝ այդ վսեմ նպատակը կատարելու ասպարիզում։ Կոնֆերենցիայի աշխատանքի հիմքում դրված է ամբողջ աշխարհում խաղաղությունն ամրապնդելու խնդիրը՝ Քրիստոսին հավատացող և իրենց ամբողջ գիտակցությամբ և բարի կամքով խաղաղության ձգտող բոլոր մարդկանց վեհագույն և ամենաանհետաձգելի խնդիրը։ Թո՛ղ Տիրոջ օրհնությունը լինի կոնֆերենցիայի վրա։

ՀՈՎԻՎ ՖԻՇԵՐ, ՀԱՅՆՑ ՖՐԻՑ

ԲԵՌԼԻՆԻՑ

Վեհափառ մեծարգո Պատրիարք Ալեքսիին լավագույն ցանկություններս՝ Սովետական Միության մեջ գտնված բոլոր եկեղեցիների և կրոնական միավորությունների հրավիրվելիք կոնֆերենցիայի կապակցությամբ։ Թող Տերն օրհնե Ձեր կոնֆերենցիան։ Մենք հույս ունենք և աղոթում ենք, որպեսզի կոնֆերենցիայի աշխատանքի արդյունքը հանդիսանա խաղաղության ամրապընդումն ու բարեկամության ամրապնդումը ժողովուրդների միջև, որպեսզի մարդիկ կարողանային աշխատել ի բարօրություն մարդկային ցեղի և ապրել այնպես, ինչպես պատվիրել է Տերը։ Շատ ենք ցանկանում, որպեսզի մոտ ապագայում հրավիրվեր բոլոր եկեղեցիների նման կոնֆերենցիա՝ բոլոր ժողովուրդների ներկայացուցիչներից։

Բարձրագույն դպրոցի քարոզիչ լիցենցիատ դոցենտ՝
ԿԵՆՇԵՐՊԵՐ
(Պոտսդամ)

ԴՐԵԶԴԵՆԻՑ

Վեհափա՛ռ Պատրիարք. ի խորոց սրտի հաջողություն ենք ցանկանում Սովետական Միության մեջ գտնված բոլոր եկեղեցիների և կրոնական միավորությունների կոնֆերենցիայի խաղաղ աշխատանքին. թող Տերն օրհնի և թող զորացնի նա Ձեզ։ Իսկ մենք Ձեզ ողջունում ենք կորնթացիներին ուղղված թղթի բառերով. «Այլ ամենայն ինչ յԱստուծոյ որ հաշտեցոյցն զմեզ ընդ իւր ի ձեռն Քրիստոսի, և ետ մեզ զպաշտօնն հաշտութեան» (Բ Կորնթ., Ե 18), և հույս ենք հայտնում, որ այդ կոնֆերենցիան կծառայի որպես քրիստոնյաների արժեքավոր մեկ ավանդը խաղաղության պաշտպանության և նրա ամրապընդման գործում։

Քրիստոնեական հրատարակչական ընկերությունից՝
Պատասխանատու ղեկավար՝ ՀՈՎԻՎ ՕԳՈՍՏՈՍ ԴԸ ԳԱԱՋ
Աստվածաբանության դոկտոր՝ ՄԱՐՏԻՆ ՌԻԽՏԵՐ
Աստվածաբանության դոկտոր՝ ՌՈԴՎԵՅԼԵՐ ԳԱՐԴՄԱՆ

ԲԵՌԼԻՆԻՑ

Ձե՛րդ Վեհափառություն. Գերմանական թեմը, հանձինս հոգևորականության և հավատացյալների, ջերմորեն ողջունում է խաղաղության կողմնակիցների՝ Մոսկվայի կրոնական կոնֆերենցիան և լիակատար հաջողություն է ցանկանում նրա աշխատանքին։ Ձերդ Վեհափառության նախաձեռնությամբ հրավիրված խաղաղության կողմնակիցների կոնֆերենցիան հանդիսանում է ամբողջ աշխարհում խաղաղության գործին Ռուսաց Ուղղափառ Եկեղեցու գործուն ծառայության մի նոր ապացույցը։ Արտահայտելով նոր պատերազմին տարբեր դավանանքների և կրոնների մարդկանց դիմադրելու զգացմունքը, Մոսկվայի կոնֆերենցիան խորացնում է չարի դեմ մղվող պայքարի ասպարիզում տարբեր կրոնների համընթացումների սերտ և փոխադարձ լայն հաղորդակցման սկզբունքը և խաղաղությունը ջատագովողների մեջ հայտարարում է այդ համընթացումների մեջ թաքնված Աստծու պատկերը։ Այս օրերում, երբ նոր պատերազմական ամպերն են երկրի հորիզոնը պատում, թող Մոսկ-

վայի կոնֆերենցիան հանդիսանա մի վահան ընդդեմ այն չար մտադրություն-ների, որոնք ուղղված են խաղաղությունը խախտելուն։

Գերմանական թեմը կոնֆերենցիային ի խորոց սրտի հաջողություն է ցանկանում նրա աշխատանքում։ Թող թագավորի խաղաղությունը երկրի ժո-ղովուրդների միջև։ Թող Տերն օգնի կոնֆերենցիայի աշխատողներին իրենց աշխատանքում։

ԲՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԼԱՅՊՑԻԳԻՑ

Սուրբ Ալեքսեևյան տաճարի՝ Լայպցիգ քաղաքում ռուսական փառքի և հաղթանակի այս հուշարձանի, կից համայնքի անունից Ձերդ Վեհափառու-թյանը ծնրադրությամբ շնորհավորում ենք ամբողջ աշխարհում խաղաղության պաշտպանության համար համաշխարհային կոնֆերենցիա հրավիրելու առթիվ և ի խորոց սրտից մերոց ողջունում ենք առաջադիմական մարդկության այդ լավագույն ներկայացուցիչներին՝ կոնֆերենցիայի մասնակիցներին, և Ձերդ Վեհափառությանը ցանկանում ենք բարի առողջությամբ իրականացնել այդ սուրբ գործը, իսկ կոնֆերենցիային՝ լավագույն հաջողություն։

Մենք, Ամենաբարձրյալի գահի առջև ռուս մեծ ժողովրդի պաշտպանի՝ նվիրագործ Ալեքսիի անունը կրելու պատիվն ունեցող ռուսական ազգային այս սուրբ հուշարձանի ծառայողներս ու ծխականներս միշտ կատարելու ենք Լայպցիգի տաճար-հուշարձանում հավիտենական քնով քնած մեր հերոս-նա-խահայրերի, ինչպես նաև Հայրենական Մեծ պատերազմի Սովետական մեծ Բանակի այն հերոսների ուխտը, որոնք իրենց կյանքը տվեցին ոչ միայն իրենց ժողովրդի, այլև Եվրոպայի ժողովուրդների, այդ թվում՝ գերմանական ժողովրդի ազատագրության և անկախության համար։

Ձերդ Վեհափառության չափազանց նվիրված և շնորհապարտ՝

Վանահայր ավագերեց՝ ԳԵՈՐԳԻ ՌՈՄԱՆՈՎԻՉ
և եկեղեցական երեցփոխ իրժեներ՝ ՆԻԿՈԼԱՅ ՎՈԼԿՈՎ